600.0279.19.08.20

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2020 թվականի №279Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, «ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0623 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՈՒՄԸ ՖՈՐՍ ՄԱԺՈՐ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2020 թվականի հուլիսի 17-ի գրությամբ «ԷՖԱՐՎԻ Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0623 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը, իսկ արտադրության լիցենզիայի գործողության ժամկետը՝ մինչև 2042 թվականի հուլիսի 1-ը: Ընկերությունը նշել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության, «ԷՖԱՐՎԻ Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության և «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ.-«Էֆէսէլ Սոլար» Էս. Էլ.-ի միջև 2020 թվականի հունիսի 26-ին կնքված Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և վերաշարադրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն՝ Կայանի կառուցման ժամանակահատված է սահմանվել մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը: Համաձայնագրով նախատեսված կառուցման ժամանակահատվածի երկարաձգումը

պայմանավորված էր Ընկերության պատասխանատվությունից դուրս գտնվող պատճառներով՝ տեղի էին ունեցել ձգձգումներ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր իրավունքները ձեռք բերելու հարցում, այդ թվում՝ Կայանը բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծի կառուցման համար անհրաժեշտ հողի նկատմամբ իրավունքները ձեռք բերելու հարցում: Ընկերությունը մատնանշել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի №1016Ա որոշումը, որով Հանձնաժողովին առաջարկվել է «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի առաջին անգամ երկարաձգումը ճանաչել որպես ընկերության կողմից նշված լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամանակահատվածում «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման և կառուցման նախագծի (դրական փորձագիտական եզրակացություններով)՝ լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետում ներկայացման պարտավորությունների կատարմանը խոչընդոտող պետական մարմնի գործողություն՝ ֆորս մաժոր: Հետևաբար, Ընկերության դիրքորոշմամբ կառուցման ժամանակահատվածի երկարաձգումը չի առաջացնի որևէ տույժ Ընկերության համար,

բ) Ընկերությունը, ի լրումն նշված գրության, սույն թվականի օգոստոսի 13-ին Հանձնաժողով է մուտքագրել գրություն, համաձայն որի՝

- ✓ միջազգային մրցույթի միջոցով անցկացված՝ վերականգնվող էներգիայի ոլորտում պետություն-մասնավոր համագործակցության ծրագիրը պետք է իրականացվի փոխառու միջոցների ներգրավմամբ: Նշված ծրագիրը ֆինանսավորող կողմերի և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև բանակցություններն ավարտվել են և 2020 թվականի հունիսի 18-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել են որպես ֆինանսավորման նախապայման Համաձայնագրի փոփոխությունները: 2020 թվականի հունիսի 26-ին կողմերը ստորագրել են փոփոխված և վերաշարադրված Համաձայնագիրը, որը ծրագրի ֆինանսավորման հիմքն է, իսկ տարհանման օդային գծի նկատմամբ բոլոր իրավունքների առկայությունը՝ ֆինանսավորման նախապայմանը.
- ✓ Ընկերությունը գործադրել է բոլոր անհրաժեշտ միջոցները տարհանման օդային գծի համար անհրաժեշտ իրավունքները ձեռք բերելու համար, սակայն Ընկերության վերահսկողությունից դուրս գտնվող պատճառներով (օրինակ՝ համապատասխան հողակտորների նկատմամբ փաստացի սեփականատիրոջ

կողմից գրանցված սեփականության իրավունք չունենալու պատճառով) այդ գործընթացը ձգձգվել է: Ստեղծված իրավիճակը հանգուցալուծելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է կայացրել ծրագրի համար անհրաժեշտ՝ Գեղարքունիքի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ հանրության գերակա շահ ճանաչելու մասին միայն այս տարի՝ 2020 թվականի մայիսի 14-ին: Հայաստանի Հանրապետության կառավարության վերոնշյալ որոշումից հետո միայն Ընկերությունը հնարավորություն է ստացել ավարտելու տարհանման գծի համար անհրաժեշտ հողերի նկատմամբ իրավունքների ձեռքբերման գործընթացը, որը դեռևս ընթացքի մեջ է.

- ✓ Ընկերության վերահսկողությունից դուրս գտնվող մի շարք այլ պատճառներով, ինչպիսիք են Հայաստանի Հանրապետության կառավարությունում կադրային փոփոխությունները ծրագրի համար մրցույթի անցկացման և ֆինանսավորող կողմերի հետ Համաձայնագրի շուրջ բանակցությունների փուլերում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, խոչընդոտել են ծրագրի իրականացմանը՝ առաջացնելով կառուցման ժամանակահատվածի երկարաձգման անհրաժեշտությանը՝ ֆորս մաժորի հիմքով, ինչը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի №1016-Ա որոշմամբ,

բ) «Լիցենզավորման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Լիցենզավորված անձն իրավունք ունի որոշակի ժամկետով տրված լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս առաջ լիցենզիայի ժամկետը երկարաձգելու հայտ ներկայացնել լիցենզավորող մարմին,

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ)

- 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով պետք է դիմի Հանձնաժողով,
- 77-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտն իր մեջ, ի թիվս այլնի, պետք է պարունակի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի դրական դիրքորոշումը.

դ) Համաձայնագրի «Ծրագրի իրականացման ժամանակացույց» 4-րդ հավելվածի համաձայն՝ կոմերցիոն շահագործման ամսաթիվը նախատեսված է 2022 թվականի հուլիսի 1-ին, իսկ Համաձայնագիրը ստորագրվել է 2020 թվականի հունիսի 26-ին,

ե) Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝
  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.
  3) լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

զ) Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի №1016Ա որոշման 4-րդ կետով առաջարկվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի առաջին անգամ երկարաձգման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան

փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագծի (դրական փորձագիտական եզրակացություններով) հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը 2-րդ անգամ երկարաձգված համարվելու պարագայում սույն որոշմամբ՝ Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին կառավարության աջակցության համաձայնագրով սահմանված՝ հետաձգող պայմանների և ֆինանսավորման ամփոփման վերջնաժամկետների երկարաձգումը ճանաչել որպես ընկերության կողմից նշված լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամանակահատվածում «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման և կառուցման նախագծի (դրական փորձագիտական եզրակացություններով)՝ լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետում ներկայացման պարտավորությունների կատարմանը խոչընդոտող պետական մարմնի գործողություն՝ ֆորս մաժոր,

է) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ՝

Համաձայնագրի համաձայն՝ կոմերցիոն շահագործման ամսաթիվը նախատեսված է 2022 թվականի հուլիսի 1-ին, ինչը համընկնում է Ընկերության ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով հայցվող ժամկետին,

- ԼԷ №0623 լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման հայտը գործող իրավակարգավորումների համաձայն Ընկերությունն իրավունք ունի ներկայացնել ԼԷ №0623 լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ, սակայն այն ներկայացվել է պահանջվող ժամկետից շուրջ 20 տարի շուտ, ուստի այն չի համապատասխանում գործող իրավակարգավորումների պահանջներին,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի №1016Ա որոշման համաձայն՝ Ընկերությանը տրամադրված ԼԷ №0623 լիցենզիայի պայմանների չկատարելու պատճառը պարտավորությունների կատարմանը խոչընդոտող պետական մարմնի գործողությունն է՝ որպես ֆորս մաժոր: Միաժամանակ Հանձնաժողովը արձանագրում է, որ ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման անհնարինությանը հանգեցնող հանգամանքները գտնվել են Ընկերության վերահսկողությունից դուրս և վերջինս գործադրել է բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցները դրանց լուծման համար:

Ինչի մասին վկայում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ձեռնարկված քայլերը՝ այդ թվում, Համաձայնագրում կատարված համապատասխան փոփոխությունների տեսքով: Հետևաբար Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա չէ փոխանցման և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի «ԷՖԱրՎի Մասրիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2020 թվականի հոկտեմբերի 16-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0623 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 15-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հոկտեմբերի 16-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
19 օգոստոսի 2020թ.